Վ. ՉԱՊԼԻՆԱ ՅԵՎ Ա. ԳԼԱԶՈՎ

ԿԻՆՈՒԼԻՆ

891 715
Ջ-24

ՊԵՏՀՐԱՏ

891.71 Ամ
Զ-94

2011-05

Վ. ԶԱՊԼԻՆԱ ՅԵՎ Ա. ԳԼԱԶՈՎ

ԿԻՆՈՒԼԻՆ

Թարգմ. Հ. Տ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՍ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938

2553
38

Մոսկվայի կենդանաբանական այգում Մանկա մայր առյուծը մի փոքրիկ առյուծիկ ծնեց։ Մանկան չուզեց նրան կերակրել և յես առյուծիկին տարա մեր տուն։

Առյուծիկն այնքան փոքրիկ եր, վոր ազատ տեղավորվում եր ափիս վրա։ Նրա մորթը դեղին եր, գորշ

քծերով, գլուխը մեծ, քիթը կուզիկ։ Նա կապվի ձագի պես մլավում եր։ Նրա աչքերը միայն վեցերորդ օրը բացվեցին։ Աչքերը կապույտ էին։ Իմ վորդի Տոլյան ուզեց առյուծիկին անվանել «Կապտաչյա», բայց հետո վորոշեցինք «Կինուլի» անվանել։

Ցես Կինուլիի համար զամբյուղի մեջ անկողին պատրաստեցի, իսկ յերբ տնից դուրս ելի գնում, զամբյուղը կողպեքով փակում ելի և վոչ-վոքի մտքից չեր կարող անցնել թե զամբյուղի մեջ առյուծ է ապրում։

Կինուլին շատ շուտ ընտելացավ ինձ և միշտ յետևիցս վազվզում եր։ Յերբ յես կարդում ելի, նա սիրում եր սեղանի վրա նստել։ Նստում եր ու նայում գրքիս, իբրև թե ինքն ել եր կարդում։

Վորպեսզի Կինուլին չտխրի, յես մի շոտլանդական

շուն ճարեցի, անունը Պերի։ Ցերը Կինուլիին առաջին անգամ դրեցի Պերիի մոտ, Պերին մոընչաց, իսկ հետո սկսեց լիզել։ Սա նշանակում եր, վոր նա Կինուլիին վորդեգրեց։

Կինուլին, Պերին և Տոլյան սկսեցին միասին ապրել։ Տոլյան գիշերները մահճակալի վրա եր քնում, Կինուլին բարձրանում եր բազմոցի վրա, իսկ Պերին քնում եր հատակի վրա, Տոլյայի մահճակալի մոտ։

Առավոտյան Տոլյան ամենից շուտ եր զարթնում և կամացուկ կանչում եր «Կինուլի, արի այստեղ»։ Կինուլին բաց եր անում աչքերը, ձգձգվում եր և վազում նրա մոտ։

Այնտեղ որ լես գնում եյի կենդանաբանական այգին աշխատելու, իսկ Տոլյան, Կինուլին և Պերին պատշգամբում նստում եյին ու ցած նայում։ Պարտեզում յերեխաները խաղում եյին։ Նրանք հաճախ կանչում եյին «Կինուլի, Տոլյա, յեկեք խաղանք»։ Բայց Պերին մրթմրթում



էր և Կինուլին բաց չէր թողնում։

Յերեկոներն աշխատանքից հետո Կինուլին տանում էլի զբոսանքի։ Ամեն կողմից անցորդներ էլին հավաքվում և գոռում. «Տեսեք, առյուծ է գալիս, առյուծ»։ Տրամվայները կանգ էլին առնում, ձիերը վախենում և փնչացնում էլին, իսկ Կինուլին գնում էր հանդարտ, հաղթական տեսքով, վոչ վոքի վրա չէր նայում։ Յերբ պետք էր փողոցի մյուս կողմն անցնել, միլիցիոնները ձեռքը բարձրացնում էր և լերթևեկությունը դադարեցնում, իսկ Պերին վազվզում էր Կինուլիի շուրջը, քթով հըրհըրում, դունչը լիզում։

Կինուլին նույնիսկ ավտոյով զբոսնեց։ Նստած էր պատուհանի մոտ և դեպի փողոցն էր նայում։ Շոֆերն

սկզբում շատ էր վախենում նույնիսկ, համենայն դեպս վիզը շորով փաթաթեց, իսկ հետո ասաց. «Վոր տուն վերադառնամ, կպատմեմ թե ինչպիսի ճամբորդ եմ տարել, բայց յերևի վոչ-վոք չի հավատա»։

Կինուլին և Տոլյան շատ խաղալիքներ ունեին. կեգլի, շոգե շարժ, խորանարդներ, ֆուտբոլի մեծ գնդակ։ Տոլյան խորանարդներից տուն էր շինում, իսկ Կինուլին մոտենում, թաթով խփում էր և տունը փուլ էր գալիս։ Տոլյան բարկանում, իսկ Կինուլին ուրախանում էր։ Հենց վոր գնդակը վերցնում էի, Կինուլին անմիջապես պառկում էր մեջքի վրա և նայում. շուտ կդցեմ գնդակն արդյոք։ Եթե գնդակը գցում էի, Կինուլին ճանկերը խրում էր գնդակի մեջ, մռնչում էր և

գնդակի հետ թավալվում հատակի վրա։ Տոլյան ել եր գնդակը բռնում։ Կինուլիի ճանկերը մեծ-մեծ ելին, բայց յերբ Տոլյան նրա հետ խաղում եր, Կինուլին իր ճանկերը միշտ ներս եր քաշում, վախենում եր, վոր նրան ճանկռոտի։

Ամառն այսպես անցավ, իսկ աշնանը Կինուլին մրսեց և հիվանդացավ։ Նա տխուր պառկած եր և վոչինչ չեր ուտում, շարունակ մրսում եր։ Մենք նրա չորս կողմը տաք շշեր շարեցինք, ելեքտրական ջեռուկ դրինք։ Կինուլին

չեր թողնում վոր մոտիցը հեռանամ։ Յերբ նրան թվում եր թե հեռանում եմ, թաթերը պարզում եր և խղճալի ձայնով կանչում, «Մա-ա-մա»։

Կենդանաբանական այգուց մի բժիշկ յեկավ։ Նա դեղ նշանակեց, բայց Կինուլին չեր ուզում ընդունել։ Այն ժամանակ յես մսի մի բարակ շերտ կարեցի և դեղը նրա մեջ փաթաթեցի։ Կինուլին կարծեց թե յես իրեն հյուրասիրում եմ մսով և դեղը կուլ տվեց։ Կինուլին յերկար ժամանակ հիվանդ մնաց— մի ամբողջ ամիս։ Մինչև ան-

գամ լրագրերում գրում էին թե Կինուլին հիվանդ է։

Ցերը Կինուլին սկսեց առողջանալ, ծանոթ անծանոթ նրան այցելելու թյան էին գալիս։ Նրանք բոլորն էլ սիրում էին տեսնել թե ինչպես է Կինուլին բան ուտում։ Կինուլին արդեն մեծացել էր։ Նրա համար ճաշ էին բերում մեծ կաթսայի մեջ յերկու կիլո մսից, տեսակ-տեսակ բանջարեղենից, սոխից, կորկոտից։

Կինուլին առողջացավ և նորից սկսեց սենյակներում վազվզել, յերեխաների հետ խաղալ։ Ցերեխաները մոտենում էին մեր դռանը, բանալու անցքից կամացուկ ասում էին. «Կինուլի, արի խաղանք»։ Կինուլին հասկանում էր. մոտենում էր դռանը, յետևի թաթերի վրա կանգնում, իսկ առջևի թաթով բռնակը քաշում, դուռը բաց էր անում և վազում միջանցք։ Բայց միջանցքում արդեն վոչ-վոք չէր լինում. յերեխաները թաքնվում էին։ Կինուլին փնտրում էր և խոհանոցում, և լողարանում և սեղանի տակ։

Ցերը նրանց գտնում էր, ուրախանում էր, հետո էլ ինքն էր թաքնվում։ Նա միշտ թաքնվում էր նեղ միջանցքում, պահարանի յետևում։ Կանգնում էր ու նայում յերեխաներին, իսկ յերեխաները ձևացնում էին իբրև թե փնտրում են նրան։

Ցեթե նրան անմիջապես գտնում էին, նա վիրավորվում, հեռանում էր և այլևս չէր խաղում։ «Կինուլին ով է տեսել», հարցնում էին յերեխաները միմյանց։ Ցեվ շարունակում էին փնտրել, մինչև վոր Կինուլին ինքը դուրս էր գալիս։

Կինուլին Տոլյայի շոգեշարժը շատ էր սիրում։

Բռնում եր, բայց նրանով խաղալ չեր կարողանում, միայն կրծոտում եր ու ջարդում։ Տոլյան բազկաթոռի յետևը թաքնվում եր, Կինուլիին կանչում, ուզում եր շոգեշարժը նրանից մի կերպ վերցնել։

Յերեխաների ամենահետաքրքրական խաղը «առյուծների վրա վորսի դուրս գնալն եր»։ Նրանք հավաքվում էլին սիջանցքում և յերկու խմբի բաժանվում։ Մի խումբը սիջանցքի մի ծայրին եր կանգնում, մյուս խումբը՝ մյուս ծայրին, իսկ մեջտեղում՝ Կինուլին։ Բոլորը շունչներն իրենց քաշած, սպասում էլին։ Հանկարծ յերեխաներից մեկը մի խմբից մյուս խմբի մոտ եր վազում, դա վորսորդն եր։ Կինուլին թռչում եր նրա վրա և յեթե





վոտից բռնում եր, նշանակում եր, վոր նա սպանված է, յեթե դիպչում եր, ուրեմն վիրավորված եր, իսկ յեթե վորսորդին հաջողվում եր Կինուլիի մոտից վազելով անցնել, ուրեմն Կինուլին հաղթված եր։ Բայց Կինուլին շատ քիչ եր հաղթվում, իսկ յերբ մեծացավ, միշտ հաղթում եր։

Մի անգամ յերեխաները մտածեցին Կինուլիի հետ ռազմական խաղ խաղալ. հակազազեր հագան և չորեքթաթ սողացին դեպի Կինուլին։ Կինուլին սկզբում չվախեցավ, միայն զարմացավ, իսկ հետո, յերբ յերեխաները մոտ գնացին, նա այնպես մռնչաց, վոր Տոլյան հակազազն իսկույն հանեց և ասաց. «Կինուլի, մենք ենք, ինչու վախեցար»։ Կինուլին Տոլյային տեսավ, ծանոթ ձայնը լսեց և ուրախացավ։

023



Ապրելի 20-ին Կինուլիի մեկ տարին լրացավ։ Բակի և նույնիսկ ամբողջ փողոցի յերեխաները յեկան շնորհավորելու և ընծաներ բերեցին. նոր ֆուտբոլի գնդակ, կեգլի, մեծ արկղ խորանարդեր։ Այդ որը Կինուլին նստած եր բազմոցի վրա և ճաշում եր բոլորի հետ։ Նրա համար պատրաստեցինք իր սիրած ճաշը՝ խմորաթելով արգանակ, ձկածեղ և կատլետ։ Ճաշի ժամանակ նամակները յեկավ և Կինուլիի համար շնորհավորական նամակներ բերեց։ Ծրարի վրա գրված եր. «Կինուլի Զապլինալին»։ Իսկ նամակները բոլորն էլ միատեսակ էին. «Սիրելի Կինուլի, շնորհավորում ենք քո ծննդյան որը։ Մենք քեզ շատ ենք սիրում և ուզում ենք տեսնել»։

Մի քանի որից հետո Կինուլիին տարան կենդանաբանական այգին։ Յեթե ուզում եք նրա հետ ծանոթանալ՝ գնացեք կենդանաբանական այգին։

Այնտեղ դուք կտեսնեք նրան։

2553
38

Գլխ. խմբագիր՝ Հ. Հայրապետյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Ա. Արզաքանյան

Գլավլիտի լիազոր Կ—4618 Հրատ. 4201· Պատ. 32·
Տիրաժ 5000.
Թուղթ 62×94 տպ. 1 1/4 մամ մեկ մամ 23 712 նիշ.
Հեղինակային 1/4 մամ

Հանձնված է արտադրության 20 ոգոստ. 1937 թ.
Ստորագրված է տպելու 15 փետրվարի. 1938 թ.

Գինը 70 կոպ.

Պետհրատի տպարան, Յերևան Լենինի փող. 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0391373

4544

ԳԻՆԸ 70 ԿՈՊ.

В. ЧАПЛИНА и А. ГЛАЗОВ

КИНЧЛИ

ГИЗ. АРМ. ССР. ЕРЕВАН